ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/207

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 04.08.2021թ. թիվ 26/26-1/12434-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 26.07.2021թ. թիվ 24/1-5/21/52422 գրության հիման վրա, 04.08.2021թ. թիվ 26/26-1/12434-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/207 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.08.2021թ. թիվ 26.07.2021թ. թիվ 24/1-5/21/52422 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔԱԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի միջև 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն), համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով գնման պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետի համաձայն կատարողը պարտավոր էր ստանձնել Երևանի Էրեբունի վարչական շրջանում գտնվող հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունները: Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն կատարողը պարտավոր էր ապահովել Էրեբունի վարչական շրջանի տարածքում գտնվող Էրեբունու փողոցի վերջնամասում նոր կառուցված անցուղում Երևան քաղաքի 2800 ամյակին նվիրված հուշակոթողի և Մայիսի 28-ին նվիրված խաչքարի, Ազատամարտիկների փողոցին հարող այգում Արցախյան պատերազմում

զոհված ազատամարտիկների և պատերազմում զոհված աշխատողներին նվիրված, Սասունցի Դավթի /կայանամերձ հրապարակ/, Արգիշտի թագավորի /Էրեբունի հրապարակ/, Աղբյուր եղեռնի /Գաջեգործների փող. հ. 1 հասցե/ և Ռոմտիկցիների զոհերի /Դաշտենցի փող./, Խիզախ հարավսլավացի օդաչուների /Խաղաղ Դոնի փող./, հուշարձանների պահպանման ծառայությունները իրենց մեջ ներառում են հուշարձանների, պատվանդանների մաքրում, լվացում, փայլեցում, վնասված մասերի, պլոկված տառերի վերականգնում, բացակա տառերի փորագրում և լաքապատում /մաքրումը, լվացումը և փայլեցումը անհրաժեշտության դեպքում ևս մեկ անգամ/: Անհրաժեշտ պաշտպանիչ նյութերով պատում: Հուշարձանների բազալտե եզրաքարերի մաքրում, ուղղում, բացակա մասերի լրացում: Հուշարձանների պատվանդանների բազալտե սալիկների հղկում կամ մաքրում ավազե շիթով (220 քմ), պոկված սալիկների ամրացում (2 քմ), բացակա սալիկների տեղադրում, վնասվածների փոխարինում (2.7 քմ), պատի սվաղում ցեմենտ ավազե խառնուրդով, ներկում (40 քմ), բետոնե սալիկների (2 քմ) և (1 գծմ) վերանորոգում, կարիքն առաջանալու դեպքում փոխարինում:

Վերոնշյալ ծառայությունների մատուցման պարտավորության ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 16.04.2021թ.-ից մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը ներառյալ:

Համաձայն վերը նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.3 կետի ա) ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայամանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Նույն պայամանագրի 7-րդ մասի 7.11 կետի՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www. procurement. am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Նշված պայմանագրի հավելված 2-ով սահմանված է, որ նշված ծառայությունների մատուցման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ նշված ամիսների սկսած ս.թ. ապրիլից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն

սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով»: Կնքված Պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն ս.թ. ապրիլ ամսից սկսած մեր կողմից Կատարողին պետք է վճարվեր որոշակի գումար, որը պետք է վճարվեր տվյալ ամսվա ընթացքում Կատարողի կողմից մատուցված ծառայության համար:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը և համադրելով Պայմանագրի և նրա հավելվածների դրույթները, պարզ է դառնում, որ կողմից Պայմանագրի կնքման օրվանից սկսած պետք է սկսվեր ամսական ծառայությունների մատուցումը, որի դիմաց մեր կողմից Պայմանագրի հավելված 2-ի համաձայն պետք է վճարվեր որոշակի գումար, սակայն այդ աշխատանքները մինչ օրս չեն կատարվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել՝ գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական

շրջանի ղեկավարի 03.06.2021թ. 24/1-8/12900 էլ. գրության պահանջը, մինչ օրս սկսած ապրիլ ամսից իր կողմից ստանձված ծառայությունների մատուցման պարտավորությունները որևէ կերպ չեն կատարվում հատևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերության հետ 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6- րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրն մասնակի՝ Էրեբունի վարչական շրջանի մասով միակողմանի լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/207 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 16.04.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով ծառայության մատուցման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝

պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Էրեբունի վարչական շրջանի հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների ձեռքբերման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը:

3. ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 08.07.2021թ. թիվ 24/1-5/16061 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

4. «Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔԱԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի միջև 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն), համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով գնման պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետի համաձայն կատարողը պարտավոր էր ստանձնել Երևանի Էրեբունի վարչական շրջանում գտնվող հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունները: Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն կատարողը պարտավոր էր ապահովել Էրեբունի վարչական շրջանի տարածքում գտնվող Էրեբունու փողոցի վերջնամասում նոր կառուցված անցուղում Երևան քաղաքի 2800 ամյակին նվիրված հուշակոթողի և Մայիսի 28-ին նվիրված խաչքարի, Ազատամարտիկների փողոցին հարող այգում Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների և պատերազմում զոհված աշխատողներին նվիրված, Սասունցի Դավթի /կայանամերձ հրապարակ/, Արգիշտի թագավորի /Էրեբունի հրապարակ/, Աղբյուր եղեռնի /Գաջեգործների փող. հ. 1 հասցե/ և Ռոմտիկցիների զոհերի

/Դաշտենցի փող./, Խիզախ հարավսլավացի օդաչուների /Խաղաղ Դոնի փող./, հուշարձանների պահպանման ծառայությունները իրենց մեջ ներառում են հուշարձանների, պատվանդանների մաքրում, լվացում, փայլեցում, վնասված մասերի, պլոկված տառերի վերականգնում, բացակա տառերի փորագրում և լաքապատում /մաքրումը, լվացումը և փայլեցումը անհրաժեշտության դեպքում ևս մեկ անգամ/: Անհրաժեշտ պաշտպանիչ նյութերով պատում: Հուշարձանների բազալտե եզրաքարերի մաքրում, ուղղում, բացակա մասերի լրացում: Հուշարձանների պատվանդանների բազալտե սալիկների հղկում կամ մաքրում ավազե շիթով (220 քմ), պոկված սալիկների ամրացում (2 քմ), բացակա սալիկների տեղադրում, վնասվածների փոխարինում (2.7 քմ), պատի սվաղում ցեմենտ ավազե խառնուրդով, ներկում (40 քմ), բետոնե սալիկների (2 քմ) և (1 գծմ) վերանորոգում, կարիքն առաջանալու դեպքում փոխարինում:

Վերոնշյալ ծառայությունների մատուցման պարտավորության ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 16.04.2021թ.-ից մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը ներառյալ:

Համաձայն վերը նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.3 կետի ա) ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայամանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Նույն պայամանագրի 7-րդ մասի 7.11 կետի՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www. procurement. am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Նշված պայմանագրի հավելված 2-ով սահմանված է, որ նշված ծառայությունների մատուցման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ նշված ամիսների սկսած ս.թ. ապրիլից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով»: Կնքված Պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն ս.թ. ապրիլ ամսից սկսած մեր կողմից Կատարողին պետք է

վճարվեր որոշակի գումար, որը պետք է վճարվեր տվյալ ամսվա ընթացքում Կատարողի կողմից մատուցված ծառայության համար:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը և համադրելով Պայմանագրի և նրա հավելվածների դրույթները, պարզ է դառնում, որ կողմից Պայմանագրի կնքման օրվանից սկսած պետք է սկսվեր ամսական ծառայությունների մատուցումը, որի դիմաց մեր կողմից Պայմանագրի հավելված 2-ի համաձայն պետք է վճարվեր որոշակի գումար, սակայն այդ աշխատանքները մինչ օրս չեն կատարվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել՝ գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 03.06.2021թ. 24/1-8/12900 ել. գրության պահանջը, մինչ օրս սկսած ապրիլ ամսից իր կողմից ստանձված ծառայությունների մատուցման պարտավորությունները որևէ կերպ չեն կատարվում հատևաբար Էրեբունի վարչական

շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերության հետ 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կատի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

5. Պատվիրատուի կողմից 23.07.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.08.2021թ. թիվ 26/26-1/12434-2021 գրությունը, ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 26.07.2021թ. թիվ 24/1-5/21/52422 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա***) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,***

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 16.04.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով ծառայության մատուցման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Էրեբունի վարչական շրջանի հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների ձեռքբերման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը:

ՀՀ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 08.07.2021թ. թիվ 24/1-5/16061 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔԱԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի միջև 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն), համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» ծածկագրով գնման պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետի համաձայն կատարողը պարտավոր էր ստանձնել Երևանի Էրեբունի վարչական շրջանում գտնվող հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունները: Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն կատարողը պարտավոր էր ապահովել Էրեբունի վարչական

շրջանի տարածքում գտնվող Էրեբունու փողոցի վերջնամասում նոր կառուցված անցուղում Երևան քաղաքի 2800 ամյակին նվիրված հուշակոթողի և Մայիսի 28-ին նվիրված խաչքարի, Ազատամարտիկների փողոցին հարող այգում Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների և պատերազմում զոհված աշխատողներին նվիրված, Սասունցի Դավթի /կայանամերձ հրապարակ/, Արգիշտի թագավորի /Էրեբունի հրապարակ/, Աղբյուր եղեռնի /Գաջեգործների փող. հ. 1 հասցե/ և Ռոմտիկցիների զոհերի /Դաշտենցի փող./, Խիզախ հարավսլավացի օդաչուների /Խաղաղ Դոնի փող./, հուշարձանների պահպանման ծառայությունները իրենց մեջ ներառում են հուշարձանների, պատվանդանների մաքրում, լվացում, փայլեցում, վնասված մասերի, պլոկված տառերի վերականգնում, բացակա տառերի փորագրում և լաքապատում /մաքրումը, լվացումը և փայլեցումը անհրաժեշտության դեպքում ևս մեկ անգամ/: Անհրաժեշտ պաշտպանիչ նյութերով պատում: Հուշարձանների բազալտե եզրաքարերի մաքրում, ուղղում, բացակա մասերի լրացում: Հուշարձանների պատվանդանների բազալտե սալիկների հղկում կամ մաքրում ավազե շիթով (220 քմ), պոկված սալիկների ամրացում (2 քմ), բացակա սալիկների տեղադրում, վնասվածների փոխարինում (2.7 քմ), պատի սվաղում ցեմենտ ավազե խառնուրդով, ներկում (40 քմ), բետոնե սալիկների (2 քմ) և (1 գծմ) վերանորոգում, կարիքն առաջանալու դեպքում փոխարինում:

Վերոնշյալ ծառայությունների մատուցման պարտավորության ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 16.04.2021թ.-ից մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը ներառյալ:

Համաձայն վերը նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.3 կետի ա) ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայամանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Նույն պայամանագրի 7-րդ մասի 7.11 կետի՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www. procurement. am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Նշված պայմանագրի հավելված 2-ով սահմանված է, որ նշված ծառայությունների մատուցման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ նշված ամիսների սկսած ս.թ. ապրիլից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի

համաձայն՝ «Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով»: Կնքված Պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն ս.թ. ապրիլ ամսից սկսած մեր կողմից Կատարողին պետք է վճարվեր որոշակի գումար, որը պետք է վճարվեր տվյալ ամսվա ընթացքում Կատարողի կողմից մատուցված ծառայության համար:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը և համադրելով Պայմանագրի և նրա հավելվածների դրույթները, պարզ է դառնում, որ կողմից Պայմանագրի կնքման օրվանից սկսած պետք է սկսվեր ամսական ծառայությունների մատուցումը, որի դիմաց մեր կողմից Պայմանագրի հավելված 2-ի համաձայն պետք է վճարվեր որոշակի գումար, սակայն այդ աշխատանքները մինչ օրս չեն կատարվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել՝ գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք մասնակիցների ցուցակում

ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 03.06.2021թ. 24/1-8/12900 ել. գրության պահանջը, մինչ օրս սկսած ապրիլ ամսից իր կողմից ստանձված ծառայությունների մատուցման պարտավորությունները որևէ կերպ չեն կատարվում հատևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերության հետ 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կատի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

Պատվիրատուի կողմից 23.07.2021թ. Տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Էրեբունի վարչական շրջանի հուշարձանների և մշակութային արժեքների մաքրման, պահպանման ծառայությունների ձեռքբերման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ***2021թ. նոյեմբերի 30-ը***:

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն պայմանագրի միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման՝ Պատվիրատուն՝ հիմք ընդունելով, այն հանգամանքը, որ «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Երեբունի վարչական շրջանի ղեկավարի 03.06.2021թ. 24/1-8/12900 էլ. գրության պահանջը, մինչ օրս սկսած ապրիլ ամսից Ընկերության կողմից ստանձված ծառայությունների մատուցման պարտավորությունները որևէ կերպ չեն կատարվել, միակողմանի հրաժարվել է «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերության հետ 16.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/86» պայմանագրի հավելված 1-ի 2-րդ ենթակետից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված, մինչդեռ՝ ուսումնասիրելով Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը, այն է՝ մինչև ***2021թ. նոյեմբերի 30-ը***, արձանագրում եմ, որ Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ ***23.07.2021թ.***, առկա չեն եղել Պայմանագիրն մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցմամբ նշված Պայմանագրի էական խախտում համարվելու հիմքերը:

Մասնավորապես, ուսումնասիրելով Պայմանագրով նախատեսված Կատարողի կողմից պայմանագրի էական խախտման 2-րդ կետի 2.1.3 ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված հիմքը՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, գտնում եմ, որ այն բացակայում է, քանի որ, ինչպես Պատվիրատուն է նշել ծանուցմամբ, դեռևս 23.07.2021թ. դրությամբ Կատարողի կողմից ծառայությունը չի մատուցվել, հետևաբար ծառայության մատուցված չլինելու պայմաններում նշված հիմքն արձանագրելը հնարավոր չէ:

Ինչ վերաբերվում է Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված հիմքին՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, ինչպես հետևում վերոնշվածից արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը լուծվել է ծառայությունների մատուցման համար նախատեսված առավելագույն ժամկետի (***2021թ. նոյեմբերի 30***) լրացած չլինելու պայմաններում, ընդ որում ծառայությունների մատուցման պարբերականություն կամ միջանկյալ ժամկետ

Պայմանագրով նախատեսված չէ, հետևաբար գտնում եմ, որ նշված հիմքը ևս բացակայում է:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 04.08.2021թ. թիվ 26/26-1/12434-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**